— Չե՞ս տեսնում, ինչպէ՞ս գնամ:

— Ծո՛յլ, — ծաղրելով նկատեց եղբայրը, — ամէն օր երեսդ կապում ես, թէ ատամս է ցաւում... քո ատամի ցաւը չպրծաւ...

Աշխէնը չհամբերեց եղբօր կծու նկատողութեանը, այլ երկու ձեռքերը բարձրացնելով եւ բոլոր մատները բաց անելով, ասաց.

— Դու գնա՛յ, գիտեմ, որ դասերդ չես սովորել... որքան զրոյ ես ստանալու, տասն զրո՛յ, տեսնո՞ւմ ես...

Եղբայրը ետ չնայեց եւ հեռացաւ:

Հայրը սկսեց ժպտալ իր զաւակների վրայ:

— Արամ, — ձայն տոեց նրա ետեւից, — վարդապետիդ ասա, որ ճաշին մեզ մօտ լինի: Ասա՛, որ Արփիարը այսօր գալու է Մուշից:

Աշխէնը սկսեց ինքն իրան մրթմրթալ:

— Տասն օր է, որ ատամս ցաւում է... Նա ասում է, որ սուտ եմ երեսս կապել...

— Այդ քո տասնից մենք չազատոեցանք, Աշխէն, — ծիծաղելով նկատեց հայրը, — տասն օր որտեղի՞ց կը լինի, երկու օր է, որ քո ատամը ցաւում է:

Տասն թիւը մի խորհրդաւոր թիւ էր փոքրիկ Աշխէնի լեզւում, այդ թոով լրանում էին նրա ամէն հաշիւները:

— Դէ՛, զաւակս, վազի՛ր ներքեւ, այգեպանին ասա՛, որ այստեղ գայ: Ա՛յ, այնտեղ, թթենիների ծառաստանի մէջ կը լինի. տերեւներ է կտրատում շերամի համար:

Աշխէնը թիթեռնիկի արագութեամբ անյայտացաւ խիտ ծառաստանների մէջ, որոնք նրան այնքան ծանօթ էին, որքան իր պահարանի խաղալիքները: Բայց մի քանի րոպէից յետոյ, վազվզելուց շնչասպառ եղած, վերադարձաւ, միայն դատարկ լուր բերելով:

— Տասն անգամ կանչեցի, ձայն չտոեց:

— Դարձեալ տասն... տօ՛, չարաճճի, ես քո ձայնը միայն մէկ անգամ լսեցի, — ասաց հայրը ծիծաղելով, — սուտեր է ՞լ ես իմանում խօսել:

Աշխէնը գլուխը քարշ ձգեց, եւ նրա փափուկ թշերը աւելի կարմրեցան: Հայրը բռնեց նրան եւ սկսեց փայփայել մետաքսի նման գեղածաւալ գիսակները, որ սփռոել էին ուսերի վրայ:

Այդ սիրող հայրը Կարօն էր: Նա մի ժամանակ դանակով մարդիկ էր մորթում, իսկ այժմ դանակով պատոաստ էր անում: Զարմանալի փոփոխու-